

Շահապաղին մեծագույն սխալը այս շար-
ժումը եղած էր: Եթէ ինք փոխանակ Մար-
սէլէն Պոլիս անցնելու, անցած ըլլար Ա-
ղեքսանդրիա, այսօր տխուր հարկին տակ
պիտի չլսնուէինք ողբալու իր անդարմա-
նելի կորուստը:

Ոչ միայն կը ցաւիմ անկեղծօրէն, իբր
եղբայր եւ ընկեր, իր անվերադարձ մեկ-
նումին համար, այլեւ անոր համար որ
այս տառապահիւժ, արիւնաքամ աղբը
չառ պէտք ունէր իրեն նման զարգացած,
վառվռուն մտաւորականներու:

ՆԱՄԱԿ ԲԱՐՍԵՂ ՇԱՀՊԱՋԷՆ

ԱՓՍՈՐԻ ՃԱՄԲԷՆ

Սիրելի քոյրերս*

Այնքապ, 6 Յուլիս 1915

Սրտի անբացատրելի բերկրութեամբ երէկ ստացայ հեռագիրնիդ: Մէկ
ու կէս ամիսէ ի վեր, ձեզմէ բացարձակապէս լուր չունենալուն՝ երեւակայու-
թիւնս ա՛յնքան զրոգուեալ էր որ ինձ կը թուէր թէ ո՛չ միայն ես քայլ առ քայլ
դէպի գերեզման կ'երթամ, այլ եւ դուք այդտեղ հիւանդ էք:

Տեսնենք, այս անիմանալի տառապանքներու բովէն եթէ ողջ դուրս դամ՝
ի՛նչպէս իրարու կը փարինք դարձեալ: Անշուշտ կ'անցնի այս փոթորիկն ալ.
բայց հարցը հոն է որ կարենայի դիմանալ ֆիզիքապէս: Ես ինքզինքս աւելի
առողջ եւ դիմացկուն կը կարծէի. բայց ահա քիչ մը ատենուան յոգնութիւն,
տաք կերակուրի պակաս եւ անկողնի չզոյութիւն՝ դիւ վերածեցին թոյլ դան-
դուածի մը, որ ոտքի կանգնելու կարողութիւն չունի: Գլուխս կը դառնայ
չարունակ, ստամոքսս այլեւս ոչինչ կրնայ մարսել, մինչեւ անգամ մածունը
եւ կու դայ, աղիքներս կը ցաւին, հաւանաբար պառկած տեղս քար ըլլալէն.
եւ ոտքերս ամբողջ վէրքերով լեցուած են:

Այստեղ համոզում գոյացուցին որ անկարող եմ շարունակելու ճամբաս.
եւ ահա 6-7 օր է որ դիւ վար դրած են՝ քիչ մը հանգստանալու համար: Բայց
ի՞նչպէս կարելի է այդ. դեռ 8-10 օրուայ ճամբայ ունիմ մինչեւ Մ. Աղիդ:
Չեմ ալ գիտեր թէ ինչո՞ւ դիւ հող կը զրկեն, քանի որ ոչ մէկ կապ ունիմ այդ
քաղքին հետ: Վեց տարի առաջ, Սահմանադրութեան նոր հռչակուած ատեն,
իբր «Արեւելք»ի թղթակից, հոն հանդիպեցայ քանի մը օր, եւ իթթիհատա-
կան սպաններու հետ թեւ թեւի շրջեցանք, մէկ երկու բանախօսութիւն ըրինք.
C'est tout!

Կարօտցեր եմ ամէնքնիդ ալ, ինչպէս կոյրը կը կարօտնայ լոյսը:
(Թէոդիկ, 1920, էջ 60)

ԲԱՐՍԵՂ ՇԱՀՊԱՋ

Տիկնայք Չարուհի Պահրի եւ Եւգինէ Սաչիկեան (Շիշի):

